«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Խոսքի և հաղորդակցման ուսուցման առանձնահատկությունները տարրական դասարաններում

ԱՌԱՐԿԱ Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ Իդա Սնխչյան

ՄԱՐԶ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Փարաքարի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4
ԽՈՍՔԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ 6
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ 6
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ « ԽՈՍՔ և ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ » ԺԱՄԵՐԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ: 10
Գրքի տարրերը, կազմ, տիտղոսաթերթ, վերնագիր, նկարազարդում 10
Ստեղծագործության վերնագիր, հեղինակի անուն 10
Գրքի կառուցվածքը 10
Խոսքը որպես հաղորդակցվելու միջոց 10
Հաղորդակցում, մենախոսություն, երկխոսություն 10
Մենախոսություն, դրա առանձնահատկությունները 10
Երկխոսություն, դրա առանձնահատկությունները, վարելու կանոնները 11
Երկխոսություն, վարելու կանոնները, բանավեճ 11
Խոսքային վարքագծեր, ներողություն, խնդրանք, ողջույն, շնորհակալություն 11
Գեղարվեստական ստեղծագործությունների՝ պատմվածք, բանաստեղծություն, առանձնահատկությունները, տարբերությունները 11
Հասկացություն տեքստի մասին 11
Տեքստի կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները 11
Տեքստի սկիզբ, ավարտ, դեպքերի հաջորդականություն 12
Զրույց, հարց ու պատասխան տեքստի շուրջ 12
Հասկացություն տեքստի պարբերության մասին 12
Տեքստի պլան 12
Տեքստի տեսակները, պատմողական, նկարագրական 12
Պատմողական տեքստ 13
Նկարագրական տեքստ 13
Նկարագրության տեսակները՝ գեղարվեստական և գործնական 13
Դատողական խոսք 13
Դատողական տեքստ 13
Գրական հերոս, արարք 13
Տեքստի հիմնական միտք 13
Խոսքային գործունեություն 14

Հաղորդակցման ձևերը՝ բանավոր և գրավոր....14
Բանավոր հաղորդակցում՝ խոսել, լսել....14
Խոսքային հաղորդակցում, մենախոսություն, երկխոսություն....14
Խոսքային հաղորդակցում երկխոսություն, բանավեճ....14
Խոսքային վարքագծեր, բարեկիրթ հաղորդակցում....14
Գրավոր հաղորդակցում՝ գրել, կարդալ....15
Տեքստը գաղափարը՝ հիմնական միտքը....15
Տեքստի հիմնական միտքը....15
Տեքստի կառուցվածքային-իմաստային առանձնահատկությունները՝ սկիզբ, ընթացք, ավարտ....15
Տեքստի վերնագիր, պարբերություն....15
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ....16
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հոգեբաններ Լ. Ս. Վիոտսկին, Ա. Լ.Լեոնտևը և ուրիշներ ապացուցել են, որ երեխայի հոգեկան բոլոր գործընթացները (հիշողություն, ուշադրություն, մտածողություն, ըմբռնում) ձևավորվում են խոսքի միջոցով: Խոսքը հոգեկան բարդ գործընթաց է, որի զարգացումը կախված է մի շարք պայմաններից: Կարևորվում է շրջապատի միջավայրի ներգործությունը. երեխան սովորում է խոսել, ընդօրինակել մեծահասակներին, որոք պետք է նպաստեն երեխայի ճիշտ, հստակ խոսքի ձևավորմանը: Բանն այն է, որ երեխան վաղ տարիքից լսելով մաքուր, գեղեցիկ, ճիշտ խոսք՝ արդյունքում ձևավորում է սեփական խոսքը:

Երեխայի անձի ձևավորման և զարգացման մեջ խիստ կարևոր նշանակություն ունեն խոսքի և հաղորդակցության զարգացումը: Հայտնի է, որ երեխայի մտածողությունն արմատական փոփոխությունների է ենթարկվում, երբ նա ունակ է դառնում լեզվական հաղորդակցության և ուսուցումը նրան սովորեցնում է տիրապետել սեփական մտքերին (Լ.Ս.Վիգոտսկի):

Երեխայի խոսքի զարգացումը, լեզվական հաղորդակցումն ու փոխազդեցությունն իր անմիջական միջավայրի, շրջապատի հետ, հասակակիցների և մեծահասակների հետ համատեղ գործունեությունը նրա զարգացման ամենակարևոր գրավականներն են:Հասարակության մեջ իր տեղը գտնելու համար մարդը պետք է արդյունավետ հաղորդակցվել սովորի: Երեխան նախ շփվում է ծնողների հետ, այնուհետև նաև այլ մարդկանց, սովորում է հաղորդակցվել համատեղ գործունեության ընթացքում: Այդ գործունեությունը կարող է լինել խաղ, ուսում, իր ուժերի չափով աշխատանք: Այդ ընթացքում երեխան յուրացնում է իր միջավայրի սոցիալական փորձը, հասկանում է, թե ինչը ինչպես է արվում, սովորում է վարքի ու գործունեության նորմերն ու կանոնները, այսինքն՝ հասկանում է, թե ինչ կարելի է անել, իսկ ինչ՝ ոչ, ում հետ ինչպես կարելի է վարվել, որտեղ իրեն ինչպես պիտի պահի և այլն: Իր շրջապատի սոցիալական նորմերի յուրացման այս գործընթացն էլ հենց սոցիալականացումն է:

Երեխայի վաղ սոցիալականացման ամենակարևոր կողմերից մեկը նրա հաղորդակցական կարողությունների ձևավորումն ու զարգացումն է:

Հենվելով մի շարք հոգեբանամանկավարժական հետազոտությունների և մեր ուսումնասիրությունների վրա՝ կարող ենք նշել, որ խոսքային հաղորդակցման լիարժեք ուղղորդումը նպաստում է երեխաների և միջավայրի փոխհարաբերությունների ձևավորմանը, նրանց անձնային տարբեր որակների զարգացմանը:

Տարրական դպրոցն ավարտողը պետք է կարողանա՝ հայերենով հաղոդակցվել մեծահասակների և փոքրերի հետ, ընկալել ուրիշների խոսքը և արտահայտել սեփական մտքերը, կարդալ և հասկանալ գրավոր պարզ տեքստեր, գրավոր շարադրել պարզ տեքստեր, կարողանալ աշխատել համագործակցված, լինել թիմի անդամ, լինել նախաձեռնող: Պետք է կարողանա գիտակցել և արժևորել իր ազգային ինքնությունը, հարգել և ընդունել ընտանեկան ու հասարակական կյանքի արժեքները, իմանա իր իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատու լինեի իր արարքների համար, ուցաբերել հարգալից վերաբերմունք շրջապատի նկատմամբ, հանդուրժողականություն և զուսպ վարք ունենա: Այս բոլորի համար ուսուցիչը պետք է իրականացնի տարրական դպրոցի կարևորագույն խնդիրը՝ սովորել սովորեցնել:

ԽՈՍՔԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Երեխան մայրենի լեզվի կրողն է: Նա լավ թե վատ, ճիշտ թե սխալ անընդհատ հաղորդակցվում է, ճանաչում ինքն իրեն, արտահայտում իր մտքերը, փորձում հասկանալ ու հասկանալի լինել: Մայրենի լեզվի ուսուցում ասվածը պայմանական է, քանզի մարդն այն յուրացնում է ամբողջ կյանքի ընթացքում: Երեխան ծնված օրվանից արդեն կրում է մայրենի լեզուն: Կրտսեր դպրոցի խնդիրն է դառնում օգնել երեխային գրավոր և բանավոր խոսքը ճիշտ ձևակերպել, կարողանալ արտահայտել իր հույզերը, զգացմունքները ու հաղորդակցվել: Մայրենի լեզվի ուսուցումը, որպես ուսուցման հիմնական լեզու, անընդհատ է ու սերտորեն կապված է սովորողի ամենօրյա գործունեության հետ: Այն պետք է նպաստի սովորողի՝ բնականոն, անկաշկանդ, ստեղծագործող, տրամաբանող, ազատ արժեհամակարգի ձևավորմանը:

Կրտսեր դպրոցում մայրենի լեզվի խնդիրը խոսքային հմտությունների, կարդալու կարողությունների զարգացումն է: Կրտսեր դպրոցականի խոսքը զգայուն է: Խոսքը մարդկային հասարակության մեջ հաղորդակցման կարևորագույն գործոն է և ինքնահաստատման, սեփական եսը դրսևորելու, մտածողության, աշխարհընկալման կարողությունների զարգացման ամենաանհրաժեշտ միջոցը: Այդ է պատճառը, որ տարրական դասարաններում մայրենիին հատկացված ժամաքանակից, իբրև անհրաժեշտ բաղադրիչ, շաբաթական ժամերից մեկը հատկացնել աշակերտների խոսքային կարողությունների զարգացման խնդիրներին՝ բաղադրիչն անվանելով « Խոսք և հաղորդակցություն »:

«Խոսք և հաղորդակցություն» ժամերի առանձնահատուկ հատկանիշներից մեկը խոսքային գործունեության հիմնական տեսակների (կարդալ, գրել, լսել, խոսել) ուղղությամբ կազմակերպված համակարգված և նպատակամետ աշխատանքն է: Այն ունի ուրույն խնդիրներ և նպատակներ:

Կարդալ:

Կարդալ, դեռ չի նշանակում հասկանալ: Կարևոր է կարդացածը հասկանալ: Իրեն հասկանալի տեքստը հասկանալի ներկայացնել դիմացինին: Կարդալիս առանձնացնել հիմնական ասելիքը, միտքը, գաղափարը: Բառարանի օգնությամբ բացատրել անծանոթ բառն ու դարձվածքը, գտնել հանդիպած բառերի հոմանիշներն ու հականիշները, պատմելիս դրանք փոխարինել համապատասխան բառով կամ արտահայտությամբ: Դասագիրքը չի կարող լինել ուսումնական միակ կամ գլխավոր նյութը, տեղեկատվության միակ աղբյուրը. ուսումնական նյութերը անընդհատ թարմացվում-հարմարեցվում են սովորողին: Ուսումնական նյութերի հիմնական շտեմարանը մեդիագրադարանն է, որի բաժանորդն են սովորողն ու ուսուցիչը:

Գրել

Սովորողը պիտի ցանկանա գրել իրեն ծանոթ, իրեն հարազատ, իրեն մոտ, հետաքրքիր, իրեն առնչվող թեմաների մասին: Երեխան պիտի գրի իր մասին, իր ապրումների, իրեն շրջապատող աշխարհի, մարդկանց ու իրեն հուզող ու հետաքրքրող երևույթների, իրադարձությունների մասին: Նման թեմաների շուրջ երեխաներն անընդհատ կարող են գրել: Կարող են գրել նկարագրական շարադրություններ, պատրաստել տեղեկատվական նյութեր, օրվա մասին պատմել, գրել նամակներ, ինչպես նաև՝ հայտարարություններ ու շնորհավորանքներ:

Լսել

Մեր ժամանակներում, երբ ամեն ինչ փոխվում է, առավել է կարևորվում լսելու ունակությունը: Էվոլյուցիոն անցում կատարելու համար, էականորեն ՆՈՐԸ գտնելու համար այսօր պահանջվում է խմբային մտածողություն, երբ մտածում է ո՛չ մեկը, այլ խումբը: Իսկ դրան հասնելու անհրաժեշտ և, թերևս, ամենակարևոր պայմանը լսելն է:

Խոսել

«Խոսի՛ր, որպեսզի ես կարողանամ ճանաչել քեզ»:

Սոկրատես

Մենք ավելի շատ խոսում ենք, քան գրում: Երեխայի խոսքի զարգացումը մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկն է: Խոսքի շնորհիվ է տեղի ունենում սովորողի հոգեկան զարգացումը, սոցիալականցումը, ձևավորվում է նրա

ներաշխարհը: Տարրական դասարանում խոսքի զարգացման խնդիրներից առանձնահատուկ կարևորվում են կապակցված խոսքի ձևավորումն ու զարգացումը, քանի որ կապակցված խոսքի միջոցով է իրականացվում լեզվի և խոսքի հիմնական՝ հաղորդակցման գործառույթը: Կապակցված խոսքը մտավոր գործունեության բարձրագույն ձևն է, այն որոշում է երեխայի խոսքային և մտավոր զարգացման մակարդակը:

Գրաճանաչության դեռևս նախաայբբենական փուլից սովորողների խոսքի և հաղորդակցման խնդրի պատշաճ կարևորության ընդունումը մանկավարժներին մղել է փնտրտուքի, և ծնել բազում հնարների մի ամբողջ զինանոց: Դրա կիրառումը միտված է կրտսեր դպրոցում երեխայի խոսքի զարգացմանը, միջավայրում հաղորդակցման, իր հույզերի մասին տարբեր արտահայտման ձևեր օգտագործելու կարողությունների զարգացմանը: Այս ժամերի արդյունավետ կազմակերպումը կնպաստի հաջողությամբ իրականացնել լեզվի ուսուցման հաղորդակցական և գործառութային մոտեցումը և կնպաստի աշակերտների խոսքի արդյունավետ զարգացմանը:

« Խոսք և հաղորդակցություն » ժամերին տեղ են գտել կառուցվածքային այնպիսի տարրեր, ինչպիսիք են.

- հաղորդակցական նպատակի սահմանում և դրա իրագործման խոսքային միջոցների ընտրություն,
- խոսքային իրավիճակի ներմուծում և խոսքի դրդապատճառի ստեղծում,
- ուսումնական խնդրի որոշում և դրա լուծման եղանակների ու քայլաշարերի որոշում,
- ուսումնական և խոսքային գործունեության կազմակերպում՝ գրավոր և բանավոր ձևերով արտահայտվելու միջոցով,
- ստեղծված տեքստերի և բանավոր պատումների ստուգում և վերլուծություն՝ հետագա շտկողական աշխատանքով,
- Խոսքի իրականացված նպատակների ընդհանրացում և եզրահանգում:

Տարրական դպրոցի տարբեր դասարաններում « Խոսք և հաղորդակցություն » ժամերին նպատակահարմար է աշխատանքներն այնպես կազմակերպել, որպեսզի

առաջադրանքներն ապահովեն այս կամ այն կարողության ու հմտության աստիճանական զարգացումն ու խորացումը :

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ « ԽՈՍՔ և ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ » ԺԱՄԵՐԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ:

Գրքի տարրերը, կազմ, տիտղոսաթերթ, վերնագիր, նկարազարդում

Աշակերտները կսովորեն գրադարանից օգտվելու կանոնները, կզրուցեն գրքի կազմի, տիտղոսաթերթի, շապիկի, ստեղծագործության մասին: Կնկարազարդեն որևէ հեքիաթ կամ պատմվածք:

Ստեղծագործության վերնագիր, հեղինակի անուն

Աշակերտները կբացատրեն, թե ով է համարվում ստեղծագործության հեղինակը, կթվարկեն մի քանի գրողների անուններ, ըստ վերնագրի ենթադրություններ կկատարեն որևէ տեքստի բովանդակության շուրջ, կհորինեն նոր վերնագիր որևէ փոքրածավալ տեքստի բովանդակությանը համապատասխան:

Գրքի կառուցվածքը

Աշակերտները կխորացնեն գիտելիքները գրքի կառուցվածքի մասին՝ զրուցելով գրքի կազմի, տիտղոսաթերթի, շապիկի, բովանդակության մասին, կներկայացնեն ընթերցած փոքրածավալ գրքերի համառոտ բովանդակությունը:

Խոսքը որպես հաղորդակցվելու միջոց

Աշակերտները համապատասխան խոսքային իրավիճակներում կզարգացնեն ազատ ինքնարտահայտման կարողությունները, խոսքը կօգտագործեն տարբեր նպատակների համար՝ համոզել, մխիթարել, շնորհավորել, արդարանալ, զվարճանալ և այլն:

Հաղորդակցում, մենախոսություն, երկխոսություն

Աշակերտները կսովորեն տարբեր խոսքային իրավիճակներում ասելիքը ներկայացնել մենախոսությունների և երկխոսությունների միջոցով, կսովորեն հաղորդակցվելիս ճիշտ օգտագործել դիմախաղը, շարժուձևը, ճանաչել դրանց գործածության ձևերը:

Մենախոսություն, դրա առանձնահատկությունները

Աշակերտները կսովորեն մենախոսել՝ դրսևորելով արտասանական կարողությունները, կպատրաստեն փոքրիկ ելույթ՝ իրենց հետաքրքրող թեմայով:

Երկխոսություն, դրա առանձնահատկությունները, վարելու կանոնները

Աշակերտները կսովորեն վարել երկխոսություն՝ պահպանելով վարելու կանոնները, նայել խոսողի աչքերին, հարցեր տալ, կիրառել բարեկիրթ խոսքի ընդունված լեզվական միջոցները: Կստեղծեն երկխոսություններ խոսքային տարբեր իրավիճակներում:

Երկխոսություն, վարելու կանոնները, բանավեճ

Աշակերտները կսովորեն ստեղծել երկխոսություն կատարելու կարողությունները, կծանոթանան բանավեճի կանոններին, կբանավիճեն որևէ խնդրահարույց հարցի շուրջ:

Խոսքային վարքագծեր, ներողություն, խնդրանք, ողջույն, շնորհակալություն

Աշակերտները կամրակայեն բարեկիրթ խոսքի, բարեկիրթ վարքի հմտություններ: Ներկայացված դրվագներում կկարողանան տարբերել բարեկիրթ խոսքը ոչ բարեկիրթ հաղորդակցությունից: Կընտրեն որևէ դրվագ և կներկայացնեն դերերով՝ օգտագործելով խոսքային վարքագծեր:

Գեղարվեստական ստեղծագործությունների՝ պատմվածք, բանաստեղծություն, առանձնահատկությունները, տարբերությունները

Աշակերտները պատկերացում կկազմեն գեղարվեստական խոսքի մասին, կտարբերեն պատմվածքն ու բանաստեղծությունը՝ նշելով նրանց առանձնահատկությունները: Կհորինեն փոքրիկ բանաստեղծություն կամ պատմվածք որևէ առարկայի կամ երևույթի մասին:

Հասկացություն տեքստի մասին

Աշակերտները գաղափար կկազմեն տեքստի մասին, որը բաղկացած է ընդհանուր իմաստով միավորված նախադասություններից և այդ նախադասությունները դասավորված են որոշակի հաջորդականությամբ: Կուսումնասիրեն տարաբնույթ նյութեր և կորոշեն, թե դրանցից որոնք են տեքստեր, որոնք՝ ոչ:

Տեքստի կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները

Աշակերտները կամրակայեն գիտելիքները տեքստի, դրա կառուցվածքի և իմաստային առանձնահատկությունների մասին, կհամեմատեն երկու տեքստեր, կգտնեն դրանց նմանությունն ու տարբերությունը, տրված խառը դասավորությամբ նախադասություններով կազմեն տեքստ: Կշտկեն տեքստի նախադասությունների խառնված հերթականությունը՝ ուշադրություն դարձնելով տեքստի իմաստին և

վերնագրելով այն, կհամեմատեն իրենց դրանց վերնագրերը ընկերների դրած վերնագրերի հետ և կորոշեն տեքստի բովանդակությանը:

Տեքստի սկիզբ, ավարտ, դեպքերի հաջորդականություն

Աշակերտները կընթերցեն որևէ տեքստ, կորոշեն տեքստի սկիզբը, դեպքերի հաջորդականությունը, ավարտը: Տրված նախադասությունները վերադասավորելով կստանան տեքստ: Կվերլուծեն տեքստի իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունները: Կստեղծեն փոքրածավալ տեքստ՝ պահպանելով սկիզբը, դեպքերի հաջորդականությունը, ավարտը:

Զրույց, հարց ու պատասխան տեքստի շուրջ

Աշակետները հարց ու պատասխանի միջոցով վեր կհանեն դեպքերի մեջ պատճառահետևանքային կապերը տեսնելու կարողությունները, կամրակայեն տեքստի շուրջ հարցեր ձևակերպելու և պատասխանները տեքստում գտնելու կարողություններ: Զրույց-երկխոսություն կստեղծեն առաջադրված տեքստի շուրջ:

Հասկացություն տեքստի պարբերության մասին

Աշակերտները գաղափար կկազմեն պարբերության՝ որպես գրավոր խոսքի բովանդակության ամենափոքր հատվածի մասին, պարբերությունների կբաժանեն որևէ տեքստ և կորոշեն յուրաքանչյուր պարբերության հիմնական միտքը:

Տեքստի պլան

Աշակերտները կամրակայեն տեքստը մասերի բաժանելու, հատվածների բովանդակությունը ներկայացնելու, վերլուծելու և հարցեր առաջադրելու կարողությունները: Կսովորեն գրել բառային կամ պատկերային պլան: Կխորացնեն տեքստը մասերի բաժանելու, հատվածների բովանդակությունը ներկայացնելու, վերլուծելու կարողությունները:

Տեքստի տեսակները, պատմողական, նկարագրական

Աշակերտները կսովորեն տարբերակել պատմողական կամ նկարագրական բնույթի տեքստերը, առաջադրված 2 տեքստերի միջև կգտնեն նմանությունները և տարբերությունները, կորոշեն տեքստերի թեման և կվերարտադրեն: Կորոշեն ունկնդրած տեքստերի տեսակները և կգտնեն դրանց տարբերությունները; Առաջադրված տեքստը կշա-ռունակեն այնպես, որ մի դեպքում ստացվի պատմողական, մի այլ դեպքում նկարագրական տեքստ:

Պատմողական տեքստ

Աշակերտները կսովորեն տարբերակել պատմողական տեքստերը: Որևէ հերոսի կամ նրա արարքի մասին կստեղծեն պատմողական տեքստ:

Նկարագրական տեքստ

Աշակերտները կսովորեն տարբերակել նկարագրական տեքստերը: Տրված նկարագրական-բնութագրական արժեք ներկայացնող բառերով կստեղծեն փոքրածավալ նկարազարդ տեքստ: Որևէ նկարագրական տեքստից կառանձնացնեն նկարագրական արժեք ներկայացնող բառերն ու արտահայտությունները:

Նկարագրության տեսակները՝ գեղարվեստական և գործնական

Աշակերտները կիմանան ժողովրդական հեքիաթների առանձնահատկությունների մասին, կկարողանան առանձնացնել բարի և չար հերոսներին: Ընթերցած հեքիաթը կբաժանեն մասերի, կվերնագրեն և կորոշեն հիմնական միտքը;

Դատողական խոսք

Աշակերտները կընթերցեն որևէ գեղարվեստական տեքստ և այդ տեքստի տվյալները կամ դեպքերը տրամաբանորեն համադրելով՝ դատողական բնույթի խոսք կկազմեն:

Դատողական տեքստ

Աշակերտները որևէ թեմայի շուրջ գրավոր կշարադրեն դատողական բնույթի տեքստ, կօգտվեն տեքստի ստուգման ձևերից՝ անհրաժեշտության դեպքում ուղղելով նաև բառերի, բառակապակցությունների, նախադասությունների անտեղի կամ սխալ գործածության դեպքերը

Գրական հերոս, արարք

Աշակերտները կսովորեն ընթերցած նյութի հերոսների արարքների մասին մեկնաբանություններ և բնութագրական աշխատանքներ կատարել: Կսովորեն տեքստի հերոսների վարքագիծը, արարքները և դրդապատճառները որոշելու և գնահատելու կարողությունները:

Տեքստի հիմնական միտք

Աշակերտները կզարգացնեն տեքստի հիմնական միտքը երկրորդականից տարբերելու կարողությունները: Կկարդան տրված 2 տեքստերը, կհասկանան դրանց հիմնական մտքերը, կգտնեն դրանց տարբերություններն ու կվերնագրեն:

Խոսքային գործունեություն

Աշակերտները կիմանան, որ խոսքը հանդիսանում է մարդկանց գործունեության կազմակերպման և պլանավորման միջոց: Կկարողանան խոսքն օգտագործել տարբեր իրավիճակներում:

Հաղորդակցման ձևերը՝ բանավոր և գրավոր

Աշակերտները կիմանան, որ հաղորդակցումը լինում է բանավոր և գրավոր, կգտնեն ընդհանրություններ և տարբերություններ բանավոր և գրավոր խոսքի միջև: Կկարողանան բանավոր և գրավոր շարադրել իրենց մտքերը, տպավորությունները տեքստի, հերոսների, դեպքերի մասին:

Բանավոր հաղորդակցում՝ խոսել, լսել

Աշակերտները կկարողանան բանավոր հաղորդակցվելիս ճիշտ գիտակցել առոգանության, ժեստի, դիմախաղի դերը: Կկարողանան լսել, հասկանալ ուսուցչի խոսքը, ռադիոհաղորդումները, ձայնագրությունները:

Խոսքային հաղորդակցում, մենախոսություն, երկխոսություն

Աշակերտները կկարողանան պատրաստել հաղորդում տրված թեմայով կամ իրեն հետաքրքրող թեմատիկայով՝ դրսևորելով ճարտասանական կարողությունները:

Խոսքային հաղորդակցում երկխոսություն, բանավեճ

Աշակերտները պատմություններ պատմելիս կհորինեն հանպատրաստից երկխոսություններ և ընկերների հետ կներկայացնեն՝ հորինելով հերոսներ, միջավայր և իրավիճակներ, կկարողանան բանավիճել որևէ խնդրահարույց հարցի շուրջ՝ պահպանելով բանավեճի կանոնները:

Խոսքային վարքագծեր, բարեկիրթ հաղորդակցում

Աշակերտները կամրակայեն բարեկիրթ խոսքի, բարեկիրթ վարքի հմտությունները: Ներկայացված դրվագներում կկարողանան տարբերել բարեկիրթ խոսքը ոչ բարեկիրթ հաղորդակցումից:

Գրավոր հաղորդակցում՝ գրել, կարդալ

Աշակերտները կկարողանան կարդացած ստեղծագործությունն օգտագործել նոր տեղեկատվություն ստանալու նպատակով, կկարողանան գրառել իրենց տպավորությունը կամ գրական տեքստի հատվածները հատուկ տետրում:

Տեքստը գաղափարը՝ հիմնական միտքը

Աշակերտները կընթերցեն տրված երկու տեքստերը, կորոշեն յուրաքանչյուրի թեման, կհասկանան հիմնական մտքերը, կգտնեն դրանց տարբերությունը, կկարողանան շարադրել ընթերցած որևէ տեքստի հիմնական միտքը:

Տեքստի հիմնական միտքը

Աշակերտները կընթերցեն տեքստը և կորոշեն հիմնական միտքը, կկարողանան վերնագրել տեքստը՝ հիմք ընդունելով հիմնական միտքը:

Տեքստի կառուցվածքային-իմաստային առանձնահատկությունները՝ սկիզբ, ընթացք, ավարտ

Աշակերտները կորոշեն ընթերցած տեքստի սկիզբը, դեպքերի հաջորդականությունը ընթացքը և ավարտը:

Տեքստի վերնագիր, պարբերություն

Աշակերտները կամրակայեն պարբերության՝ որպես գրավոր խոսքի բովանդակային ամենափոքրը հատվածի մասին ունեցած իրենց գիտելիքները: Կբաժանեն պարբերությունների որևէ տեքստ և կորոշեն յուրաքանչյուր պարբերության հիմնական միտքը:

Հենվելով մի շարք հոգեբանամանկավարժական հետազոտությունների և մեր ուսումնասիրությունների վրա՝ կարող ենք նշել, որ խոսքային հաղորդակցման լիարժեք ուղղորդումը նպաստում է երեխաների և միջավայրի փոխհարաբերությունների ձևավորմանը, նրանց անձնային տարբեր որակների զարգացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով լեզվի տիրապետման իմաստը ոչ միայն և ոչ այնքան լեզվական և մշակութային գիտելիքների յուրացումն է, որքան այդ գիտելիքների հիման վրա խոսքային գործունեության ակտիվ տիրապետումը:

Մանկավարժական հաղորդակցումը մասնագիտական հաղորդակցություն է ուսուցչի և աշակերտի միջև՝ դասի ու արտադասարանական շփման ընթացքում, որն ունի որոշակի մանկավարժական գործառույթներ, ուղղված է բարենպաստ հոգեբանական մթնոլորտի ստեղծմանը, ուսումնական գործունեության և ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների կայունացմանը՝ ուսումնական խմբի շրջանակներում: Այսինքն՝ հաղորդակցման ընթացքում և խեսքի միջոցով է կատարվում ուսուցչի դաստիարակչական ներգործությունը սովորողների գիտակցության ու վարքի վրա:

«Խոսք և հաղորդակցություն» ժամերի կառուցվածքը պայմանավորված է ուսումնական խնդիրների և խոսքային իրավիճակների բովանդակությամբ և նպատակներով:

Վերը նշված խնդիրները միտված են արդյունավետ խոսքային կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, ուստի նաև՝ արդյունավետ շփվող և հաղորդակցվող անձի ձևավորման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <<Խոսք և հաղորդակցություն>> Գ. Թորոսյան, Կ. Թորոսյան, Հ. Խաչատրյան

2. Նախաշավիղ

3. Հանրակրթության պետական չափորոշիչ